ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2021թ. N---Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Եղ. Թադևոսյան փողոցի հ.2/1 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.06.2016թ. հ.15062016-01-0145 վկայական) 1030.59քմ մակերեսով տարածքի (հասարակական շինություններ՝ 856.94քմ, 147.39քմ և 26.26քմ ծածկ) և դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 765.7քմ մակերեսով հողամասի համար կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2024 թվականի փետրվարի 10-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է երկարաձգել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Եղ. Թադևոսյան փողոցի հ.2/1 հասցեում գտնվող 1030.59քմ մակերեսով գույքի և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 765.7քմ մակերեսով հողամասի համար կնքված անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը:

Եղ.Թադևոսյան փողոցի հ.2/1 հասցեում գտնվող 1030.59քմ մակերեսով տարածքը (հասարակական շինություններ՝ 856.94քմ, 147.39քմ և 26.26քմ ծածկ) և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 765.7քմ մակերեսով հողամաը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.06.2016թ հ.15062016-01-0145 գաղտնաբառ՝ ZADSU2EYDPMT վկայականի՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 13-ի հ.579-Ա որոշմամբ Երևան քաղաքի ավագանին թույլատրել է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Եղ. Թադևոսյան փողոցի հ.2/1 հասցեում գտնվող 1030.59քմ մակերեսով տարածքը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 765.7քմ մակերեսով հողամասը անհատույց օգտագործման իրավունքով 3 (երեք) տարի ժամկետով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը: Որոշման կատարումն ապահովելու նպատակով կայացվել է Երևանի քաղաքապետի 2016 թվականի սեպտեմբերի 14-ի հ.3240-Ա որոշումը: Որոշման հիման վրա կազմակերպության հետ 23.09.2016թ. կնքվել է գույքի անհատույց օգտագործման հ.2433 պայմանագիրը, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.09.2016թ. հ.27092016-01-0151, գաղտնաբառ՝ WSFBUEIEV3N9 վկայական):

Քննարկվող տարածքում գործում է ցերեկային խնամքի կենտրոն տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար և բարեգործական ճաշարան, ինչպես նաև իրականացվում է տնային խնամք տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Եղ. Թադևոսյան փողոցի հ.2/1 հասցեում գտնվող 1030.59քմ մակերեսով գույքի և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 765.7քմ մակերեսով հողամասի համար կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Երևան քաղաքի ավագանու «Իմ քայլը» խմբակցությունը 15.12.2020թ., «Լույս» խմբակցությունը 11.12.2020թ., «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը 14.12.2020թ. գրություններով առարկություններ չեն ներկայացրել և այն գնահատել են դրական:

Ելնելով կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունից և անհրաժեշտությունից, ղեկավարվելով 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.315-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գորողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման նախագիծ, համաձայն որի առաջարկվում է քննարկվող տարածքը, զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասով մինչև 2024 թվականի փետրվարի 10-ը ժամկետով, տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Հ.ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ